դ) Ողբը

Միջնադարյան ողբին նվիրված իր արժեքավոր մենագրության մեջ Պողոս Խաչատրյանը ժանրն ի սկզբանե դիտարկում է «իբրև հայ ժողովրդի կյանքի պատմական և գեղարվեստական արտահայտություն»[36]: Ուստի՝ բնական է, որ ողբն այդքան հաճախական կիրառություն ունի միջնադարյան հայ գրականության, ի մասնավորի՝ հայ պատմագրության շրջարկում: Մյուս կողմից՝ «հայ միջնադարյան գրականության մեջ ողբագրությունն սկզբից ևեթ չի ծագել իբրև գրական անկախ տեսակ, այլ երևան է եկել պատմագրական կամ այլ կարգի ծավալուն երկերում որպես նրանց բաղկացուցիչ մաս, որպես ողբական հատված, մտորում հայրենիքի, նրա ժողովրդի, կորսված պետականության և իր փայլից զրկված եկեղեցու ծանր վիճակի մասին»[37]: Այս առումով՝ ուշագրավ է, որ թեպետ մինչև 17-րդ դարը ողբի ժանրն արդեն բարձրագույն դրսևորումներ էր արձանագրել նաև Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան», Ներսես Շնորհալու «Ողբ Եդեսիոյ» երկերում ու Արիստակես Լաստիվերցու «Պատմության» մեջ, այդուհանդերձ, ողբի ժանրն ու ժանրային յուրահատկությունները

---

36 ***Պողոս Խաչատրյան,*** Հայ միջնադարյան պատմական ողբեր (ԺԴ-ԺԸ դդ.), Երևան, 1969, էջ 5:

37 Նույն տեղում, էջ 14: